

սը. և քանի որ աւաղը չէ պառկել՝ կրտսերը իրաւունք չունի պառկելու: Երբ արական սեռի բոլոր անդամները պառկում են՝ նոր սկեսուրը փոքր հարսի օգնութեամբ սկսում է հանուել և պառկել ամուսնու մօտ: Յետոյ միւս հարսներն են պառկում, դարձեալ աւագութեան կարգով: Առհասարակ կանայք պառկում են իրանց ամուսինների հետ միեւնոյն անկողնում, և եթէ միայն մի երեխայ ունին՝ նրան էլ իրանց մօտ են առնում, իսկ եթէ երեխաները շատ են՝ սրանց համար իրանց անկողնի մօտ յատուկ մի անկողին են ձգում և բոլորին միասին պառկեցնում: Բոլորից յետոյ փոքր հարսը հանգցնում է ճրագը և զգուշութեամբ հանուելով՝ պառկում ամուսնու մօտ՝ տան ամենահեռու անկիւնում:

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն Դ Ե Ղ Ե Ր ¹⁾:

Ականջացաւ.—Միքանի ձուի դեղնուց մի պղնձէ ամանով թեք կերպով դնում են կրակի վրայ: Դեղնուցից յառաջանում է իւզ, որ ապակեայ սրուակի մէջ ածած պահում են, և հարկաւոր միջոցում 4—6 կաթիլ ածում են ցաւոյ ականջի մէջ:

Նուաբ տաք մոխիրի մէջ խորովում, միջից կիսում և տաք տաք դնում են ցաւոյ ականջի վրայ:

Ծխախոտի ծուխը փչում են ականջի մէջ, որ ցաւը դադարի:

Ականջի շարաւ: Երբ ականջից շարաւ է հոսում՝ ասում են ականջը ճնել է: Հին Ժամանակներում այդպիսի դէպքերում ականջների մէջ մեռռն էին կաթեցնում:

Ամուրուքիւն.—Ըիբը կոնածև կտրելով դնում են նստատեղիում:

Այրուածք.—Սպիտակ հողը ջրով շաղախում և դնում են այրուած տեղի վերան:

Խորոված կարտոֆիլը մանրելով դնում են այրուած տեղի վրայ:

Աջացաւ.—Եթէ աչքը կարմրել, արիւնով լցուել է՝ ոչխարի սպիտակ թուքից մի կտոր դնում են աչքի վրայ և մի քանի անգամ փոխում:

¹⁾ Բացի իմ հաւաքածից օգտուել եմ նաև պ. Տէր Գեորգեանի իմ խրնդրով հաւաքած դեղերից և բժ. պ. Գեղեվանովի „Заблужденийъ убадѣ... въ медицинскомъ отношеніи“ աշխատութիւնից:

Կապուտ քարը (ЖЕДНЫЙ КУПОРОСЪ) արելով և փոշիացնելով լուծում են ջրի մէջ և կաթեցնում ցաւող աչքի մէջ:

Կծու-խոտ բոյսի արմատը եփում են և նրա ջրի մէջ բամբակ թաթախում և չորացնում են. ապա այդ բամբակը թրջում են կնոջ կաթի մէջ և դնում ցաւող աչքի վրայ:

Խորոված ձուկն երկու կտոր անելով՝ շիբի (КВАЦИ) մանրունք են ցանում վերան և բամբակով դնում ցաւած աչքի վրայ:

Ասամնացաւ.—Փայտէ գդալի կոթը տաք մոխրի մէջ սաստիկ տաքացնում և դնում են ցաւող ատամի վրայ:

Մեխակը ձեծում, ցանում են բամբակի վրայ և դնում ցաւող ատամի վրայ:

Մխտորը ձեծում են, հետը աղ և խոզի ճարպ խառնում և դրնում ատամի վրայ:

Եթէ երեսն ուռչում է՝ դարու ալիւրից եփած խաշիւր տաք տաք քաշում են մի շորի վրայ և դնում այտին:

Արիւննոսութեան դէմ գործ են ածում. վառած շորի մոխիր, կենդանիների աղը, ջրով կամ մէզով թրջուած:

Բաւակացաւ.—Մեծ քանակութեամբ իշի կաթ են խմում:

Բերանի բորբոքում.—Պղպեղի փոշուց մի թէչի գդալի չափ ածում են մի բաժակ ջրի մէջ և նրանով բերանը ողողում:

Բոր.—Մխտորի գլխով տրորում են չորացած բորը:

Գլխացաւ.—Գինու թունդ քացախով տրորում են գլուխը.—Մխտորը ձեծում են, աղ ցանում, վերան թունդ քացախ ածում և կապում ճակատին: Թթու դրած վարունքը կիսում, դնում են ճակատին:

Գորսնուկ.—Օձի կաշու մի կտոր են տալիս ընդունելու:

Երեսի դեղին վերք.—Առաւելապէս փոքր երեխաներին է պատահում.—Նռան կճեպը կամ դեղին ներկած բրդի թելը աչրում են, մոխիրն ձէթով շաղախում և դրանով օծում վերքը:

Խաւարցի.—Առաւելապէս երեխաներին է պատահում. կարմրում է գլխի կաշին և ջրակալում. $\frac{1}{2}$ ֆ. լուացքի սապոն, $\frac{1}{2}$ ֆ. սև նաւթ, 2 գլուխ սոխ և փոքր ինչ ոչխարի դմակ խառնում են միասին, եփում և կտաւի վերայ քսելով՝ կապում գլխին, նախապէս գլուխը ածիլելով և լուարով:

Խիաւուկ. (Водобъ въ пазъ).—Կթաւատի փոշին կաթով եփում և տաք-տաք կապում են ուռուցքի վրայ, և այս բանը կրկնում են՝ մինչև որ ուռուցքը հասնում է: Այս միջոցին ածիլով ձակում են ուռուցքը, որ շարաւը հոսի: Յետոյ մեղրամոմի, այծի ճարպի և ձէթի հաւասարաչափ խառնուրդ են պատրաստում, մէջը աւելացնում են եր-

կու մտխալ քափուրու փոշի և ապա սրանից պատրոշգներ շինելով՝ դնում վերքի մէջ, որպէսզի բոլոր շարաւը ձծի:

Ծաղիկ.—Ո՛չ մի դեղ չեն անում, այլ միայն աշխատում են սուրբ մնալ, առադաստ չմտնիլ, տունը հում միս չբերել, չկռուել, չհայհոյել և այլն:

Կարմուկ.—Ո՛չ մի դեղ չեն անում, միայն կոկորդի վրայ ուռուցք նկատուելիս՝ կթաւատի փոշին կաթով եփում և դնում են վերան:

Կասաղած Եան կծած.—Մի շիշ գինու մէջ $\frac{1}{4}$ ֆունտ սխտոր եփելով՝ խմացնում են:

Կարիճի կծած.—Դռաբը—որ պատրաստում են խաղողի հլւթը եփելով—ջրի մէջ լուծում և տալիս են խմելու:

Կոկորդացաւ.—Խար-թութը երկար եփում են, շորի վրայ քաշում և կապում:

Կողքի ծակոց (КОЛОТЪ ВЪ СТОМАХЪ).—Մի բաժակ գինու մէջ ածում են մի բուռ չորացած վարդ և մի թէչի գգալ աղ, որ երկար եփելով՝ քաշում են մի շորի վրայ և դնում ցաւած տեղի վրայ:

Զիբի մանրունքը կաթի մէջ շաղուելով՝ դնում են վերքի վերայ:

Հաղլացաւ.—Քղալին հիւանդին ձեռքից բռնած պար են ածում դաւուր-զուռնի ներդաշնակութեամբ և այս այնքան երկար, մինչև որ հիւանդը բոլորովին անզգայացած վայր է ընկնում:

Մայասիլ.—Սափրիչը ածելիով կտրում է դուրս եկած պտուկները և վերքի վերայ սուլէյմանու (Folia Sonnae) ածում, հիւանդներն զգուշանում են ոգելից խմիչքներից և թթու կերակրներից:

Միզարգելութիւն.—Աւելուկը խաշում են և տաք-տաք դնում որովայնի վրայ:

Մոլոխու.—Հիւանդին փաթաթում են մետաքսէ սպիտակ շորի մէջ և շուտ շուտ վերան սառն ջուր են ածում:

Յոդացաւ (РЕВМАТИЗМЪ).—Օղիի մէջ կարմիր պղպեղ (СТРУЧКОВЫЙ ПЕРЕЦЪ) են ձգում և դրանով տրորում են ցաւող անդամները:

Զան կծածի դեմ.—Բակլան կամ լոբին կիտում և դնում են վերքի մէջ:

Կծող շան մագը փառում և մոխիրը ցանում են կծած տեղի վրայ:

Զարաւ.—Զեխնի բոցի մոխիրը խառնում են գինու հետ և շորի վրայ քաշելով դնում են շարաւոտ վերքերի վրայ:

Վերքերի շարաւը մաքրելու համար ռաբ-ռաբ (սև ծառ) կոչուած ծառի արմատը երկար եփում են, ապա ջրի մէջ ալիւր խառնում և դնում վերքի վրայ:

Ոսկրացաւ.—Մորենին արմատով հանում, ածում են տաք

Թոնրի մէջ, որի ափին պառկեցնում են հիւանդին, նախապէս անկողին ձգելով: Ապա Թոնիրը այնպէս են ծածկում, որ մորենուց բարձրացած գոլորշին անցնի անկողնի մէջ և քրտնացնէ հիւանդին:

Մորենին եփում են և ջրովը լողացնում են հիւանդին:

Ցաւոյ մասերը արջի ճարպով օծում են:

Նոր մորթած աչծի մորթու մէջ փաթաթում են երկու, երեք օր:

Տաք աղիւս կամ տաքացրած աղ են կապում ցաւած տեղերին:

Պղպեղը ածում են Թունդ օղիի մէջ և 2—3 օր պահելուց չետոյ դրանով տրորում են ցաւոյ մասերը:

Սալիտակ նաւթ են քսում:

Ոսկորի կոտրուած.— Գիւղական ոսկրաբոյժը ուզողում է կոտրուած ոսկորը, չետոյ անլուայ կտաւի մի կտորի վրայ մի քանի ձուի դեղնուց և փոշիացրած խունկ քսում և նրանով փաթաթում է կոտրուած տեղը: Ապա ուռենու ծառից պատրաստած չորս փոքրիկ տախտակներ դնում է կոտրած ոսկորի շուրջը և թելով կապում: Այսպէս մնում է 4—5 օր, ապա նորից քանդում են և նոյն դեղը կրկնում:

Հիւանդին լաւ սննդում են և չաճախ ոչխարի ոտներից և գլխից պատրաստուած խաշ ու զինի տալիս:

Ուռոյցի Ամորձիքի.— Կթաւատի փոշին կաթով եփում են և շորի վրայ քսած՝ կապում ամորձիքին:

Ջարդուած (УШИДЪ).— Նոր մորթած աչծի մորթով փաթաթում են ջարդուած տեղը: Թարմ մսով փաթաթում են:

Գարու թեփը քացախի և ջրի հետ խառնելով քաշում են շորի վրայ և կապում են ջարդուած տեղը:

Ջերմ.— Տանու փիպերտից (геранъ огородный) և բրնձից սուանց աղի արգանակ են եփում և ուտեցնում հիւանդին:

Մեծ քանակութեամբ ձմերուկ են ուտեցնում, որպէսզի ջերմութիւնն իջնի և ծարաւն անցնէ:

Ջրգողութիւն.— Չորացրած վարդը եփելով տալիս են խմելու:

Մրի կտրած.— Մի թէչի գդալ պղպեղի փոշին խառնում են նոյն չափ մեղրի և մի ձուի դեղնուցի հետ, շաղախում և կտաւի վրայ քսած կապում են վէրքին: Սուկորաբար վէրքը չեն լուանում, որպէսզի «ջուր չրգողանայ»:

Սեւ պ միզելու դեմ.— Ստէպ միզելու հիւանդութիւն ունեցողին ուտեցնում են խոզի եփած լեարդը կամ խորոված մուկ (ծածուկ խորովելով):

Վախ.— Մօր մեզը տալիս են փախեցած երեխային ընդունելու:

Տեճ.— Մի քանի ֆունտ շոր եփում են ջրի մէջ ապա մզում,

կորիզները հանում և դրանով տրորում են հիւանդի մարմինը և աշխատում են դրանով քրտնցներ:

Քամած մածուն են քսում մարմնին:

Ուռենու կանաչ ճիւղերը ջրի մէջ եփում են և հիւանդին լողացնում այդ ջրով:

Տրիպերի ժամանակ մեծ քանակութեամբ ձմերուկ են ուտում, որպէսզի շատ միզեն:

Յրսի սաւառ. — Փսորած կաթը քացախի հետ խառնելով քսում են շորի վրայ և դնում ցրտի տարած մասերի վրայ:

Քարի խինան թրջելով դնում են ցրտի տարած տեղը:

Փոլու ծուրիւն. — Սև թաղիքի կտորը թրջելով դաթրանի (ма-зутъ) մէջ՝ դնում են նստատեղի անցքում և ժամը մի անգամ փոխում:

Թերխորով ձուն կխտորի (чернильные орѣшки) փոշու հետ խառնելով ուտեցնում են:

Պինդ եփած ձու են ուտում:

Փոռացաւ. — Պղպեղը օղիի մէջ ածում, խմում են: Աինեմոնը, պղպեղը և զանճաֆիլը ջրով եփում են և խմում:

Քոս. (паршъ). Աւար տափակացնում են, վառարանում կարմրացնում և դնում են գլխի քոսերի վրայ:

Քոմէշի մաճնի մէջ ձմումբի փոշի խառնելով՝ ուտեցնում են, չետոյ հինգ մաս խոզի ճարպի մէջ լուծում են մի մաս սնդիկ և սրանով օծում քոսոտի մարմինը և անմիջապէս տաք թոնրի մէջ իջեցնում և այնտեղ մի քիչ պահելուց չետոյ լողացնում:

Քրսինֆ բերեյ. — Քրտինք բերելու համար գործ են ածում մանուշակի ծաղիկներից պատրաստուած թէյ, կամ նրանից և բրնձից եփած արգանակ: Եւ կամ խուներ բոչսից պատրաստած թէյ:

Օձի կծած. — Մեծ քանակութեամբ կովի կաթ են խմացնում:

Վառած աբեթով աչրում են կծուած տեղը:

Հրաշէկ երկաթով աչրում (т-л-л) են կծուած տեղը:

Մ Ա Հ. Թ Ա Ղ Ո Ւ Մ Ն Ե Ւ Մ Ե Ռ Ե Լ Ո Յ

Զանգեղուրի ժողովորդն էլ խոր համոզուած է, որ մարդու ճակատին գրուած է նաև նրա մահուան օրը: Նա հաւատում է, որ ոչ մի հանգամանք, ոչ մի միջոց չեն կարող փո-